

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՐՏԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА. 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS. 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ. 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США. 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA. 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА. 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի Միլապեան, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 ԷՋ + 16 ԷՋ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 ԷՋ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Հասմիկ Ամիրջանյան

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ-
ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հիմնաբառեր. Եկեղեցի, հոգևոր-վարչական, հոգե-
վոր, Հայկական թեմ, Ամենայն Հայոց կաթողիկոս, առաքե-
լական, թեմակալ առաջնորդ, պետական:

Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցին (1780-1799 թթ.), անբարենպաստ պայմաններում ստանձնելով կաթողիկոսական գահը և մինչև պաշտոնական օծումը չստանձնելով հայրապետական պարտավորություններ, աթոռակալության սկզբնական շրջանում հոգևոր բնագավառում ակտիվ գործունեության չդիմեց¹: Նա ստիպված էր մերժել հայկական տարբեր թեմերի գործիչների բազմաթիվ դիմումներ՝ եկեղեցիների շինարարությանն աջակցելու, ժողովարարության կոնդակներ (դրամական հանգանակության) տրամադրելու և այլնի վերաբերյալ²:

Ղուկաս Կարնեցու աթոռակալության ընթացքում հոգևոր կյանքի կառավարման բնագավառում ամենաեական փոփոխությունը, թերևս, նոր կանոնադրության ընդունումն էր, ինչը պարտադրվեց Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից:

Չկարողանալով ներագրել կաթողիկոսական ընտրության վրա, Կ. Պոլսի պատրիարք Չափարիան Էջմիածնից պահանջեց ընդունել իր կողմից ստեղծված՝ չորս կետից բաղկացած կանոնադրությունը: Վերջինի վերաբերյալ մանրամասները բացակայում են, հայտնի են միայն չորս կետերի հակիրճ բովանդակությունը, որոնք Ղուկաս Կարնեցին 1781 թ. շաբադրել է Կ. Պոլսում Էջմիածնի ներկայացուցիչներ Մինաս (սվիրակ³) և Պետրոս (մահսարատար) վարդապետերին գրած նամակում⁴: Առաջին կետը հռչակում էր, որ «Լուսահոգուն փոքրաւորները ելանիցեն ի ներսիս», ինչը Մաղաթիա Օրմանյանի (պատմաբան, բանասեր, հետազայում Կ. Պոլսի հայոց պատրիարք) կողմից որակվել է որպես «անձնական վրեժխնդրության հետեւանք»⁵: Մյուս երեք կետերի ընդհանուր գաղափարը հռչակում էր, որ առանց Կ. Պոլսի համաձայնության կաթողիկոս չէր կարող ընտրվել, կաթողիկոսը պարտավորվում

* Հոդվածը ներկայացվել է 25.10.2020 թ., գրախոսվել՝ 26.11.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Կաթողիկոսի ընտրության համար, ըստ կարգի, համախոսական-մահսարագիր [մահսար կամ մանսար (արք.) - համախոսական նամակ, հանրագիր, մահսարատար-հանրագիրը տանող անձ] էր ուղարկվում Կ. Պոլիս, որտեղ թեկնածուն վերընտրվում էր, ապա ձեռք էր բերվում Օսմանյան կայսրության կողմից կաթողիկոսի հաստատման հրովարատակը՝ ֆերմանը, և ուղարկվում Էջմիածին, որից հետո նորընտիր կաթողիկոսն իրավունք էր ստանում օծվել Էջմիածնում: Այդ քայլով Ամենայն Հայոց կաթողիկոսն իրավունք էր ստանում իշխանություն իրականացնել նաև Օսմանյան կայսրության տիրապետության ներքո բնակվող հայ ժողովրդի նկատմամբ: Սակայն նկատի ունենալով երկրի ծանր քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակը, Էջմիածնի խորհուրդը որոշում կայացրեց Ղուկաս Կարնեցուն օծել առանց Կ. Պոլսի գիտության: Էջմիածնի վարմունքը պայրացրեց Կ. Պոլսի Չափարիա պատրիարքին [Չափարիա Փոքուլյան Կապովանեցի (1773-1799 թթ.)] և տեղի հայ իշխաններին: Պատրիարքը, որը նաև կաթողիկոսական գահի հավակնորդներից էր, հայտարարելով, որ կաթողիկոսի ընտրությունը կայացել է առանց իր գիտության և ազգային հավանության, կարգադրեց չեղարկել ընտրությունը, չհիշատակել Ղուկաս Կարնեցու անունը Արևմտյան Հայաստանի եկեղեցիներում, ինչը տևեց մոտ երկու տարի: Ավելին, նա հոգ տարավ, որ կաթողիկոսի անունով սուլթանական հրամանագիրը (ֆերման) չտրվի: Այս ամենը մեղմելու նպատակով Ղուկաս Կարնեցին գրեթե ութ ամիս չստանձնեց կաթողիկոսական պարտավորություններ և չգործածեց կաթողիկոսական կարմիր կնիք:

² Տե՛ս Դիվան հայոց պատմության (այսուհետև՝ Դիվան...), աշխ.՝ Վ. Գրիգորյանի, հ. Ա, Ե., 1984, էջ 139-140, 142, 155:

³ Նվիրակը թեմի կողմից գործուղված անձ էր, ով պետք է տվյալ վայրում հավաքեր հոգևոր հարկը, ժողովարարություն՝ հանգանակություն կատարեր հօգուտ թեմի, պաղպղեր հոգևոր այլ հարցերով:

⁴ Տե՛ս Աղանեանց Գ., Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 194:

⁵ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, 2001, Ս. Էջմիածին, էջ 3143:

Եր գործել խորհրդականների հավանությամբ, Մայր Աթոռը հաշվետու էր լինելու Կ. Պոլսին և առաջնային էին լինելու այնտեղից ստացված հրահանգները, Էջմիածնի նվիրակները պատրիարքի հրահանգներով էին գործելու և այլն:

Փաստորեն, Չափարիա պատրիարքի կողմից ներկայացված պայմանները ենթադրում էին կաթողիկոսի իրավունքների սահմանափակում՝ ի դեմս խորհրդակցական մարմնի, և հոգևոր կառավարման բնագավառում Կ. Պոլսի պատրիարքարանի առաջնայնություն և Աթոռի նկատմամբ:

Էջմիածնի միաբանությունը, քննարկելով պահանջը, իր անհամաձայնությունն է հայտնում, հատկապես վերջին երեք կետերի նկատմամբ¹: Միաբանները պնդեցին, որ նոր օրենք չէր կարող գործադրվել առանց կաթողիկոսի հաստատման (ինչպես վերևում նշվեց, Կարնեցին գահակալության սկզբնական շրջանում կաթողիկոսական գործունեության ձեռնամուխ չեղավ): Ղուկաս Կարնեցին իր հերթին, 1780 թ. դեկտեմբերին Կ. Պոլսի հայ իշխաններին գրում է, որ Գրիգոր Լուսավորչից ցարդ անընդունելի է եղել, որ կաթողիկոսի «ստորագրությունները» նրա կառավարման վերաբերյալ կանոնագիրք գրեն, կանոնադիրը միմիայն կաթողիկոսն է²: Դարձյալ 1780 թ. դեկտեմբերին պատրիարքին հղած նամակում նա հարցում է անում, որ եթե Չափարիան լիներ կաթողիկոս, արդյո՞ք կենթարկվեր ենթակա եկեղեցականի կողմից մշակված կանոնակարգին³:

Սակայն պատրիարքը տեղի չտվեց և, ի վերջո, 1783 թ. համատեղ կարգ է ընդունվում, որի համաձայն ստեղծվելու էր խորհրդակցական մարմին, որում Էջմիածնի Սինոդի անդամները, արքեպիսկոպոսները և եպիսկոպոսները պետք է լինեին թվով վեցը:

Ղուկաս Կարնեցու նամակների հրատարակիչ Գյուլտ Աղանյանցը կասկածի տակ է դնում կանոնադրության ընդունման փաստը: Նա գրում է, որ կաթողիկոսի վերաբերյալ հիշատակություններում տեղեկություններ չկան այն մասին, թե ինչ ընթացք ունեցավ այդ ամենը 1781 թվականից հետո, իսկ Ս. Աթոռում չեն պահպանվել Ղուկաս Կարնեցու ժամանակ գրված կանոններ կամ կարգադրություններ⁴:

Գ. Աղանյանցը ծանոթ էր այս հարցի շուրջ ազգագրագետ և աստվածաբան Մսեր Մսերյանցի հաղորդած տեղեկությանը: Վերջինս գրում է, որ այդ վարչության մասին միակ փաստը վերաբերվում է Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի (1770-1857 թթ.) վկայությանն այն մասին, որ Էջմիածնի և Կ. Պոլսի հոգևորականների կողմից «հաստատեալ ստորագրեցին միաբանութեամբ՝ զի անդամք սինհոդոսին Էջմիածնի՝ արքեպիսկոպոսք կամ եպոսկոպոսք՝ չիցեն պակաս քան զվեց»⁵:

Աղանյանցը կարծիք է հայտնում, որ, եթե ընդունենք, որ Մ. Մսերյանցի հաղորդածը ճիշտ է, ուրեմն պետք է ենթադրել, որ այդ վարչությունն ավելի վաղ էր ստեղծվել, իսկ Ներսես կաթողիկոսի խոսքերից պարզ երևում է, որ խոսքը գնում է ոչ թե ժողովի հաստատման, այլև անդամների թվի մասին, ինչը, ամենայն հավանականությամբ, կարող էր վերաբերել «սինհոդոսի» համար պոլսեցիների կազմած հրահանգին: Այս հրահանգի մասին հետագայում հիշատակում է Դանիել Սուրմառեցի կաթողիկոսն (1807-1808 թթ.) իր 1806 թ. հուլիսի 10-ին Էջմիածնի միաբանությանն ուղղած կոնդակում, հետևաբար Գ. Աղանյանցը վստահ է, որ խորհրդակցական ժողով սկսել է գործել Դանիել Սուրմառեցու օրոք: Նա հիմնվում է նաև պահպանված մի մատյանի փաստից, ուր ամփոփված են այդ ժողովի սկզբնավորումից սկսած՝ կաթողիկոսների կյանքի կոչած կարգադրությունները՝ վավերացված ստորագրություններով, որը սկսվում է Դանիել կաթողիկոսի կարգադրություններով⁶:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 3145:

² Տե՛ս Դիվան..., հ. Ա, էջ 162:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 166:

⁴ Տե՛ս Աղանեսանց Գ., նշվ. աշխ., գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 201:

⁵ Մսերեանց Մ., Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի. ի Սինտօնէ մինչ Յովհաննէս Ը, Մոսկուա, 1876, էջ 10:

⁶ Տե՛ս Աղանեսանց Գ., նշվ. աշխ., գիրք Ա-Բ, էջ 102:

Մ. Օրմանյանն այլ կարծիքի է. նա գտնում է, որ, եթե խոսքը վերաբերվեր կանոնական ծրագրով և գրավոր հրահանգով կազմված սինոդական մարմնին, ապա Աղանյանցը ճիշտ կլիներ: Բայց խնդիրը պարզապես «կաթողիկոսի միահեծան և աղիկամի»¹ մատակարարութիւնը դադարեցնելու և խորհրդակցութեամբ գործելու վրայ ամփոփուած ատեն, շատ լաւ կարդարանայ Աշտարակեցիին վկայութիւնը»², – գրում է Մ. Օրմանյանը: Յետևաբար, ըստ նրա, վեց խորհրդական պահելու կարգը Ղուկաս Կարնեցու կողմից 1783 թ. ընդունվել էր:

Այն ստորագրեցին կաթողիկոս Ղուկաս Կարնեցին, Էջմիածնի արքեպիսկոպոսները, Չաքարիա պատրիարքը և Կ. Պոլսի հոգոր ու աշխարհական գործիչներ: Այդ կարգը Կարնեցին հավանաբար ստորագրել է Չաքարիայի ճնշման տակ՝ նպատակ ունենալով վերջ տալ իր ընտրութեան շուրջ առաջ եկած անվստահութեան մթնոլորտին: Յետևաբար, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու խորհրդակցական կառավարական համակարգն սկիզբ է առել Ղուկաս Կարնեցուց, սակայն այն, ինչպես իրավամբ գտնում է Մ. Օրմանյանը, դեռևս նախնական և վերջնական չձևակերպված չէր³:

Հաշվի առնելով, որ Էջմիածնում կառավարիչ ժողով և Սուրբ Աթոռի գործերը կառավարելու համար կաթողիկոսին աջակցող մշտական վարչություն ստեղծվում է 1808 թ. Դանիել Սուրմառեցու օրոք, իսկ Սինոդ՝ 1836 թ. Հովհաննես Ը Կարբեցու օրոք (1831-1842 թթ.)⁴, կարող ենք եզրակացնել, որ կանոնակարգի ընդունումը Ղուկաս Կարնեցու օրոք որոշ չափով ձևական բնույթ է կրել, ինչը կարող էր պայմանավորված լինել երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր կացությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ Չաքարիա պատրիարքը հաշտվեց Ղուկաս Կարնեցու գահակալութեան մտքի հետ, չեղարկեց կաթողիկոսի նկատմամբ իր գործադրած արգելքները, այնուամենայնիվ, Ղուկաս Կարնեցին հասկանում էր, որ իր գահակալմամբ ընտրական կարգը խախտվել էր: Ուստի հետագայում նա ստեղծեց «Թուղթ կանոնականը» կամ «Թուղթ ընդհանրականը», որի մեջ ներկայացնում է ընտրութեան կարգի խախտման պատճառները: Դրանում նա ևս մեկ անգամ ներկայացնում է կաթողիկոսի ընտրութեան մինչ այդ ընդունված կարգը, ինչը նպատակ ուներ կանխել հետագայում նմանօրինակ դեպքերը:

Ըստ Ղուկաս Կարնեցու նամակների հրատարակիչ Վ. Գրիգորյանի, Կարնեցին ինքն էր որոշել ստեղծել «Թուղթ ընդհանրականը», ինչպես նաև հաշվի էր առել Կ. Պոլսի կարծիքը:

Սակայն կաթողիկոսի նամակներից զգացվում է, որ թղթի ստեղծման պահանջն ամբողջությամբ պարտադրվել և դրա բովանդակությունը նախանշվել էր Կ. Պոլսի կողմից: Այսպես օրինակ, 1787 թ. հունվարի 11-ին պատրիարքին, Կ. Պոլսի հոգևորականներին ու ժողովրդին ուղղած նամակում Ղուկաս Կարնեցին գրում է, որ կանոնական թղթի ստեղծման մասին նրանց պահանջն օրինական է և օգտակար. «Չի խնդիրք ձեր ոչ ինչ վնասածինք են, այլ օգտաւորք եւ խաղաղառիթք առ սուրբ Աթոռս եւ առ օրինեալ ազգո մեր»⁵: Կարնեցին նշում է, որ կանոնադրություն ընդունելու իր խոստումը ձգձգվել էր՝ երկրում մշտապես կատարվող օտար ասպատակությունների, հյուսիսկովկասյան լեռնաբնակ ժողովուրդների արշավանքների և այլ պատճառներով:

Կանոնագիրքը, որը գրվել էր «ըստ ոճոյ նախնի հայրապետացն մերոց սրբազանից գրութեանց» և «ըստ նախնեաց կարգաց եւ սովորութեանց», ստորագրվել է 18 եպիսկոպոսի, 38 վարդապետի ու արքեպիսկոպոսի կողմից⁶: Օրինակներից մեկը մնում է Էջմիածնում, մյուսն ուղարկվում է Կ. Պոլիս:

¹ Տէ՛ս Աղիկամի-քմահաճ, կամայական, ինքնազլուխ:

² Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3237-3238:

³ Տէ՛ս Տէ՛ս Նույն տեղում, էջ 3238:

⁴ Տէ՛ս Աղանեանց Գ., նշվ. աշխ., գիրք Ա-Բ, էջ 201:

⁵ Դիվան..., հ. Բ, Ե., 2003, էջ 209, 212:

⁶ Տէ՛ս Նույն տեղում, էջ 213:

Ղուկաս Կարնեցու և Չաբարիա պատրիարքի միջև հակամարտությունն արտահայտվեց նաև Արևմտյան Չայաստանի եկեղեցիներում Սիմեոն Ա Երևանցու (1763-1780 թթ.) կազմած եկեղեցական տոնացույցի (գործածվում էր 1777 թվականից) արգելքով: Պատրիարքը 1784 թ. հունվարի 26-ին ազգային ժողով գումարելով, վերատպել տվեց մինչ Սիմեոն Երևանցու գահակալումը գործող հին տոնացույցը և բաժանեց եկեղեցիներին, որն սկսեց գործածվել 1785 թվականից: Հրահանգվեց, որ ժամերգությունը ևս այդ տոնացույցով վարեն: «Չաբարիա պատրիարգ..., ...որ յառաջն ընդդեմ եկաց կաթողիկոսական իշխանութեան Տեառն Ղուկասու ...և տեսեալ թէ՛ ոչինչ կարե առնել այնուհետև՝ թէև անդրէն հաստատեցաւ ի նոյն Աթոռ, առաքինու վրեժխնդրութեանն արար մասնաւոր ժողով անդր ի Կոստանդինուպօլիս (յունուար 26) և ի բաց հերքեաց զնորոգ կարգաւորեալ զտօնացույցն ի Սիմեօն կաթողիկոսէ Երևանցոյ...»¹:

Ղուկաս Կարնեցին 1784 թ. ընթացքում Չաբարիային և Կ. Պոլսի հայ ամիրաներին նամակներով կոչ է անում հրաժարվել հին տոնացույցի գործածման մտքից²՝ փորձելով կանխել Կ. Պոլսի կենտրոնախույս ձգտումները:

Արդյունքի չհասնելով և հակասություններն ավելի չխորացնելու համար Կարնեցին, ի վերջո, տեղի է տալիս՝ գրելով. «...այսուհետև ոչ ինչ ունիմք գրել ձեզ զմեղադրութիւն եւ զներհակն կամաց ձերոց, այլ որպէս հաճեցեալ էր, հնովն վարիլ՝ այնպէս արասջիք: Եւ մեք ոչ տամք արգելս ձեզ...»³: Ավելին, Էջմիածնից Արևմտյան Չայաստան գործուղված նվիրակներին նա հրահանգում է չհակառակվել պոլսահայությանը: Կաթողիկոսի դիրքորոշման դրդապատճառը հակասություններից խուսափելն էր, վիճահարույց իրավիճակին վերջ դնելը և այն, որ արևմտահայությունը «...վերստին ջերմասջիք ի սեր սրբոց Աթոռոյս»⁴:

Ըստ Մ. Մսերյանցի տոնացույցի չգործածվելը տևել է երկու տարի, մինչև այն ժամանակ, երբ Չաբարիա պատրիարքն ի վերջո ընդունեց Կարնեցուն որպես կաթողիկոս, հրամայեց հիշատակել նրա անունը պատարագների ժամանակ և վերստին գործածել Սիմեոն Երևանցու շրջանառած տոնացույցը⁵: Բայց, ինչպես տեսանք, պատրիարքը Կարնեցու կաթողիկոսությունը մերժել էր 1780-1882 թթ., իսկ հին տոնացույցն սկսեց գործել 1784 թվականից հետո:

Ըստ Մ. Օրմանյանի միայն յոթ տարի անց՝ Չաբարիայի մահից հետո վերստին կիրառվեց Սիմեոն Երևանցու ստեղծած տօնացույցը⁶: Սակայն, ինչպես գիտենք, Չաբարիա պատրիարքը մահացել է 1799 թ.: Հետևաբար, Մ. Օրմանյանի մոտ անճշտություն է նկատվում՝ կապված նոր տոնացույցի ժամկետների հետ:

Մնում է ենթադրել, որ տոնացույցը կիրառվել է 1785 թ. սկսած՝ մինչև 1799 թ.՝ Չաբարիայի մահը:

Կ. Պոլսի հետ հակասությունները կարող էին առիթ հանդիսանալ հայկական ենթակաթմերի կողմից կենտրոնախույս ձգտումների: Դեռևս XVIII դ. առաջին կեսերից սկսած հայ կաթողիկոսները միջոցներ էին ձեռնարկում այդ ուղղությամբ (հատկապես Ղազար Չահկեցի (1737-1751 թթ.) կաթողիկոսի գահակալության տարիներից սկսած, երբ Մայր Աթոռը կորցրել էր իրավասությունը Ռուսաստանի հայկական թեմի նկատմամբ): Ղուկաս Կարնեցու նախորդ՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսն արդյունավետ գործունեություն ծավալեց հայոց եկեղեցու ամբողջականությունը պահպանելու և Ամենայն Չայոց կաթողիկոսի առաջնայնությունը հայկական թեմերի կողմից անվերապահ ընդունելու ուղղությամբ:

¹ Աղանեանց Գ., նշվ. աշխ., հ Ա-Բ էջ 8:

² Տե՛ս Դիվան..., հ. Ա, էջ 451-452, 463, հ. Բ, էջ 213:

³ Դիվան..., հ. Բ, էջ 213:

⁴ Նոյն տեղում, էջ 209:

⁵ Տե՛ս Մսերյանց Մ., նշվ. աշխ., էջ 8-9:

⁶ Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3169:

Չետևաբար, Ղուկաս Կարնեցու առաջին քայլերից մեկը եղավ հայ եկեղեցու միասնականության ամրապնդմանն ու Էջմիածնակենտրոն քաղաքականության պաշտպանությանն ուղղված ջանքերը, ինչը նախևառաջ ենթադրում էր հայկական մնացյալ թեմերի նկատմամբ Էջմիածնի նախկին գերագահության ապահովում: Շարունակելով իր ուսուցչի՝ Սիմեոն Երևանցու քաղաքականությունը, Ղուկաս Կարնեցին հոգևոր-վարչական համակարգի կայացման ճանապարհին նախևառաջ վերահասու եղավ վերահաստատելու ռուսական կայսրուհի Եկատերինա Երկրորդի (1762-1796 թթ.) 1768 թ. հունիսի 30-ի հրովարտակն առ Սիմեոն Երևանցին: Դրանով սահմանվում էր Ռուսաստանի հայերի հոգևոր կյանքի կանոնակարգը, ըստ որի ռուսահայերը հոգևոր հարցերում ենթարկվում էին միայն հայոց կաթողիկոսին, իսկ Ռուսաստանում հոգևոր առաջնորդ կարող էր նշանակել կաթողիկոսը, առանց որի հրամանագրի որևէ հայ հոգևորական իրավունք չուներ մուտք գարծել Ռուսաստանի սահմանները:

1781 թ. ընթացքում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Յովսեփ Արղությանի (1773-1801 թթ.) խնդրանքով կաթողիկոսը Ռուսաստանի տարբեր վայրերի կառավարիչներին ուղարկած նամակներով խնդրում է հետևել նշված կանոնակարգին և առանց հայրապետի կարմիր կնիքով թղթի և հրամանի ոչ մի հայ կարգավորի չթողնել իրենց տարածքների սահմաններից ներս: Նմանօրինակ գրություններ հղվեցին Մոզդոկի պարետ Ա. Իվանովին, Աստրախանի նահանգապետ, գեներալ-պորուչիկ Իվան Յակոբին, Ղալարի հայ բնակչությանը¹:

Կաթողիկոսն արգելեց նաև Սսի, Աղթամարի և Գանձասարի կաթողիկոսներին օժվել առանց Էջմիածնի կաթողիկոսի համաձայնության²:

Ղուկաս Կարնեցու հաջորդ քայլերն ուղղված էին հոգևոր կյանքի բնագավառում ներքին կարգուկանոնի հաստատմանը: Նա համակ ուշադրության կենտրոնում էր պահում ինչպես երկրի ներսում, այնպես էլ Արևմտյան Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Երուսաղեմի, Պարսկաստանի և այլ վայրերի հայկական թեմերի գործունեությունը, վերահսկում հայերի հոգևոր կյանքի իրավիճակները, հոգևորականների վարքագիծը, փորձում կանխել օրինազանցության դեպքերը, թեև երկրի աննպաստ քաղաքական վիճակն ու ժամանակի սղությունն արգելք էին հանդիսանում դրանք ըստ ամենայնի կատարել: Կաթողիկոսը եկեղեցական գործիչներին կոչ էր անում չզբաղվել կողմնակի գործունեությամբ, հատկապես՝ առևտրով, արգելում էր վատաբարո կամ բնակիչներին կողոպտող հոգևոր գործիչների գործունեությունը, ժողովրդից պահանջում էր նմաններին հոգևոր տուրք չտալ: Այդ մասին փաստում են Կարին, Ամիդ և այլուր հղած նրա նամակները³:

Երբեմն հոգևորականները կամ նվիրակի կարգավիճակ չունեցողները գնում էին թեմերի հեռավոր, վերահսկողությունից դուրս գտնվող վայրեր և խաբեությամբ, ինքնագլուխ զբաղվում քահանայական գործունեությամբ: Դեռևս Սիմեոն Երևանցին էր փորձել պայքարել նմանների դեմ՝ նրանց անվանելով «ավազակներ, խաբեբաներ, ինքնագլուխ ու շատաշրջիկ կարգավորականներ, որոնց շատերն անգամ կարգավոր չեն, այլ գռեհիկ աշխարհական, սուտ վարդապետ կամ ձևացեալ քահանա»⁴: Խաբեբաները երբեմն ունեցել են կեղծ գրություններ կամ կոնդակներ, անգամ սուտ մասունքներ ու խաչեր: Կաթողիկոսի հոգևոր գործունեության մասն էր կազմում պայքարը նաև աշխարհականների դեմ, ովքեր փորձում էին հոգևոր հասույթ հավաքել ժողովրդից⁵ կամ աղանդներ տարածել:

Կարնեցու գրություններից տեղեկանում ենք, որ ինքնակոչ, կամ կաթողիկոսի տեսությանն ու հավանությանը չարժանացած, ժողովարարության կեղծ թղթերով քահանաներ են շրջել Արաբկիրում, Շուշիում, Նոր Նախիջևանում, Աստրախանի, Մոզդոկի, Ղալարի

¹ Տե՛ս Աղանեանց Գ., նշվ. աշխ., գիրք Դ, էջ 211-216, 248-252; Դիվան..., հ. Ա, էջ 60, 61, 191, 194:

² Տե՛ս Աղանեանց Գ., նշվ. աշխ., Դ, էջ ԾԱ:

³ Տե՛ս Դիվան..., հ. Ա, էջ 409, 410, հ. Բ, էջ 720:

⁴ Աղանեանց Գ., նշվ. աշխ., Դ, էջ 295:

⁵ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. Չ⁴ 4538, թ. 62բ:

հայկական բնակավայրերում¹: Նման հոգևորականներին Կարնեցի հրավիրում էր Ս. Աթոռ՝ հոգևոր առաջնորդի կոնդակ ստանալու, այլապես՝ խոստանալով պատժել²:

1797 թ. Ղուկաս Կարնեցին թուղթ է հղում Բաղեշի Գոմոց վանքի ինքնահռչակ առաջնորդ Յովհաննեսին, որը «հանդգնաբար նստել է այնտեղ և գայթակղում է ժողովրդին»³: Կարնեցու նամակից հասկանում ենք, որ կաթողիկոսն անտեղյակ է եղել Յովհաննեսի առաջնորդ կարգվելուց, իսկ բնակչությունը բողոք է հղել նրա անօրինականությունների դեմ, քանի որ նա հոգևոր հասույթը կրկնակի էր պահանջել և ննջեցյալների համար ծանր տուրք կարգել:

1783 թ. հունվարին Ղ. Կարնեցին գրությամբ Բաղդադի հոգևորականներին արգելում է կաթողիկոսի կողմից տրված առաջնորդական գիր չներկայացնող հոգևորականներին ընդունել. «...զօտար եւ զշատշրջիկ կարգաւորս մի՛ շատ պահեսցեն յինքեանս, եւ նոցա իշխանութիւնն մի՛ լիցի անդ ինքնազուլիս ի գործս քահանայութեան ձեռնամխիլ»⁴: Բաղդադում բնակվող հայ երևելի Մարգար Խալդարյանին 1787 թ. դեկտեմբերին նա գրում է. «...եւ պատուեր՝ զգուշացուցանել զքահանայսն իւրեանց յանկարգութեանց»⁵:

Կաթողիկոսն ամենաակտիվ կապեր ուներ Պարսկաստանի հայաշատ բնակավայրերի՝ Նոր Ջուղայի, Խոյի, Թավրիզի հոգևոր և աշխարհական հայերի հետ, հետևում էր տեղերում հոգևոր կյանքի ընթացքին, անհրաժեշտ դեպքում պատվերներ տալիս⁶:

Կաթողիկոսը Գորիի հոգևոր առաջնորդ Սահակին դատապարտում է (1790 թ.) հոգևոր գործերից շեղվելու, Յաղպատի վանքի գործերին խառնվելու և այլ հարցերում⁷:

Ելնելով այս ամենից, Կարնեցու ուշադրության կենտրոնում էր գտնվում երկրի ներսում ու դրսի թեմերում հոգևոր առաջնորդների նշանակման, քահանաներ և սվիրակներ ուղարկելու հարցը, քանի որ վերջիններիս միջոցով վերահսկվում էր թեմերի գործունեությունը, իրականացվում հոգևոր հարկերի հավաքումն ու Էջմիածին հասցնելը և այլ հարցեր:

Դժվարություն էր ներկայացնում սվիրակների ուղևորությունը դեպի նշանակված վայրեր: Խնդրահարույց էր նաև հեռավոր թեմերի եկեղեցիներում սվիրայլ գործակալների պակասի և այլ հարցեր: Այդ ամենին գումարվում էին ուղարկված սվիրակների ու տեղի բնակիչների կամ հոգևորականների միջև ծագած վեճերի հարթման անհրաժեշտությունը: Նշված հարցերի վերաբերյալ կաթողիկոսի նամակներն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում⁸:

Ղուկաս Կարնեցու աթոռակալության օրոք մեծ հնչեղություն է ստանում Սուչովայի (Ռումինիայի Մոլդովա շրջանում) հայության համար հոգևոր առաջնորդի նշանակման հարցը⁹:

Կարնեցու նամակներում տվյալներ կան նաև այն մասին, որ մահմեդական տարբեր տիրողներ դիմել են նրան՝ խնդրելով առանց առաջնորդների մնացած հայկական վանքերում հաստատել իրենց ներկայացրած թեկնածուներին¹⁰: Օտարազգի կառավարիչների առաջարկը պայմանավորված էր այն հանգամանքով, որ եկեղեցիների չգործող լինելու դեպքում տեղի հայկական համայնքը ցրվում էր: Յետևաբար իրենք զրկվում էին աշխատավոր և հարկատու բնակչությունից:

Իր աթոռակալության ընթացքում Ղուկաս Կարնեցին փորձում էր հնարավորինս հարթել Յայաստանում ու դրսի թեմերում ծագած հոգևոր խնդիրներն ու անախորժությունները,

¹ Տե՛ս ՄՄ, ձեռ. Յ՛մ 4538, թ. 105ա; Աղանեսնց Գ., նշվ. աշխ., Դ, էջ 293-294, 331:

² Տե՛ս ՄՄ, ձեռ. Յ՛մ 4424, թթ. 107բ, 179ա:

³ Տե՛ս ՄՄ ձեռ. Յ՛մ 4538, թ. 96բ:

⁴ Աղանեսնց Գ., նշվ. աշխ., Դ, էջ 484-486:

⁵ Դիվան..., հ. Բ, էջ 311:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 459, 479, 510

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 514:

⁸ ՄՄ, ձեռ. Յ՛մ 4538, թ. 24ա; Դիվան..., հ. Բ, էջ 176, 360:

⁹ Տե՛ս Աղանեսնց Գ., նշվ. աշխ., էջ 521, 585; Դիվան..., հ. Ա, էջ 439, 448:

¹⁰ Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ XXVII:

տարաբնույթ վիճելի հարցերը: Վեճեր էին ծագում տարբեր թեմերի կամ եկեղեցիների առաջնորդության, թեմական պատկանելության, հոգևոր գործիչների նշանակման և այլ հարցերի շուրջ¹: Անհապաղ արձագանքելով հոգևոր գործիչների զանցանքների դեմ ուղղված բնակչության բողոքներին, նա օրինախախտ քահանաներին հրավիրում էր Ս. Աթոռ՝ բացատրություն տալու, մյուս կողմից աշխարհականներին հորդորում էր՝ անհարկի բողոքագրեր չգրել և չհակառակվել իրենց հոգևոր առաջնորդներին²:

Անհրաժեշտության դեպքում կաթողիկոսը չէր խուսափում անմիջականորեն դիմել մահմեդական տիրողներին՝ հարթելու տեղում առաջացած եկեղեցական վեճերը, ինչպես օրինակ՝ Խոյի Դովլաթ խանին³: Բայազետի Իսայ (Մուրթեսերիֆ Իսահակ, Իսադ, Իսախ) փաշային խնդրում է, որ այնտեղ առաքված Ս. Աթոռի նվիրակին տրամադրվի տարածքում ազատ շրջելու և նվիրակություն անելու կարգադրություն⁴:

Բայազետի Ս. Թադևոս Առաքյալ վանքի առաջնորդ Եսայի վարդապետը վախճանվել էր, ինչից օգտվելով վանքը կողոպտում ու հոգևորականներից մեծ հարկ էր պահանջում Մակուի սուլթան Ահմադը: Բայազետի հայ իշխանները Կարնեցուն խնդրում են առաջնորդ նշանակել և դիմել սուլթանին, որ վանքի նկատմամբ կարգուկանոնով վերաբերվեն⁵:

Մյուս կողմից, կաթողիկոսը քաղաքական կամ այլ հանգամանքներից ելնելով երբեմն ստիպված էր ընդառաջել օտար տիրակալներին ու ըստ վերջինների ցանկության հայկական վանքերում հոգևոր գործիչներ կարգել, ինչը հաճախակի էր պատահում վրացական արքունիքի դեպքում⁶:

Կարնեցու գործունեության մասն են կազմում տարբեր հոգևոր կառույցների բարեկարգման ու տնտեսական վիճակի բարելավման համար ժողովարարության թղթեր տրամադրելը: 1787 թ. սեպտեմբերին կաթողիկոսը Ջնդկաստանի հայերին ուղղված ժողովարարության կոնդակ է տալիս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի միաբաններին, քանի որ վանքը գտնվում էր այլազգիների ասպատակությունների ներքո և աղքատացել էր: Վանքի բարելավմանն ուղղված «Հանրական ժողովարարության» մեջ կաթողիկոսը ներկայացնում է վանքի երբեմնի հարուստ ու ճոխ և ներկա աղքատ ու անմխիթար վիճակը⁷:

1789 թ. սեպտեմբերին և 1790 թ. մայիսին տրված կոնդակներից երևում է, որ Մշո Ս. Կարապետ վանքը «...ոյժ չբաւորեալ է եւ անկեալ ի ներքոյ ծանրագոյն պարտուց»: Վանքը չափազանց տուժել էր նաև 1784 թ. երկրաշարժից, որի ժամանակ «բազում շինուածք սրբոյ վանիցն փլան»⁸:

Բազմաթիվ կոնդակներ կան հղված Նախիջևան, որոնցում խոսվում է ոչ միայն մահմեդական հարձակումների հետևանքով տարբեր վանքերի ու եկեղեցիների ավերված ու կողոպտված լինելու մասին⁹, այլև ներկայացվում է ամբողջ գավառի ու շրջակա գյուղերի՝ Դաշտ, Տընի և այլն կողոպտված և ժողովրդի տարագրված վիճակը¹⁰:

¹ Տե՛ս ՄՄ, ձեռ. Չ՞մ 4538, թ. 10ա; Աղանեսնց Գ., նշվ. աշխ., Դ, էջ 389, 427; Դիվան..., հ. Ա, էջ 227, 296, 298, 300-301, 324:

² Տե՛ս ՄՄ, ձեռ. Չ՞մ 4424, թ. 180ա, ձեռ. Չ՞մ 4538, թթ. 62բ- 63բ:

³ Տե՛ս Աղանեսնց Գ., նշվ. աշխ., էջ 564:

⁴ Տե՛ս Դիվան..., հ. Ա, էջ 270:

⁵ Տե՛ս Նոյն տեղում, էջ 197, հ. Բ, էջ 635:

⁶ Տե՛ս ՄՄ ձեռ. Չ՞մ 4538, թ. 82բ, 173բ; Աղանեսնց Գ., նշվ. աշխ., էջ 581-583, 589, 590, 677; Դիվան..., հ. Ա, էջ 271-272, հ. Բ, էջ 614, 514, 780:

⁷ Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ 374; Գրիգորյան Վ., *Էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի անտիպ նամակներում*, «Էջմիածին», 1995, 2-Է, էջ 89:

⁸ Դիվան..., հ. Բ, էջ 536:

⁹ *Ընդգծելու համար Նախիջևանի Երնջակ գավառի Ս. Կարապետ վանքին օգնելու անհրաժեշտությունը, կաթողիկոսը գրում է, որ այնտեղ են ամփոփված «...մասն մի ի փուշ պսակեն Զրիստոսի եւ այլ քանի սրբութիւնք եւ մատուկք ի սրբոյն Ստեփաննոսէ Նախավկայէն ...այլեւ սրբոց վկայից եւ մարտիրոսաց նշխարք, որք միջնորդ եւ բարեխօս են առ Զրիստոս վասն ամենայն հաւատացելոց, մանաւանդ վասն օրինեալ ազգի մերոյ»:* Դիվան..., հ. Բ, էջ 268-269, 306:

¹⁰ Տե՛ս Գրիգորյան Վ., նշվ. հոդվ., էջ 79, 89:

1790 թ. փետրվարին Բայազետի Թովմա Առաքելոց վանքի համար գրվում է մխիթարական թուղթ և ընդհանրական կոնդակներ՝ Բայազետի, Խոյի, Թավրիզի, Ուրմիայի, Սալմաստի հայերի անունով: Թե ինչն էր պատճառը, որ վաթսու ամբողջ թեմը ավերվել ու կողոպտվել էր, վկայում է կոնդակի խորագիրը. «Կոնդակ հանրական ժողովարարութեան վասն սրբոյ Թովմայի Առաքելոյ վանիցն, մինչ կողոպտեցեալ էր հանդերձ վիճական ի Ղարադաղու Մուստաֆայ խանի զօրացն ի դիմելն Նորա անդ առ ի արտաքսել ի Նախիջեւանու զՋաֆարղուլի խանն եւ զեղբայրն, եւ Նուաճեալ զերկիրն ընդ ձեռամբ հօրեղբոր որդւոց Նոցին Աբասղուլոյն, յորոյ սաղրելոյն իսկ էր եկեալ»¹:

Ժողովարար կոնդակների բավականին մեծ մասը բաժին էր հասնում Վրաստանի և վրացահպատակ հայկական տարածքների եկեղեցիներին՝ դրանց վերականգման, բարեկարգման, պարտքազերծման և այլն նպատակներով (Հաղպատի և Սանահինի վանքեր, Հավլաբարի Ծիրանավոր Ս. Աստվածածին եկեղեցի և այլն)²:

1783-1789 թթ. ընթացքում նմանօրինակ կոնդակներ են հղվում Գորու Ս. Ստեփաննոս եկեղեցուն, Հին Ջուղայից ոչ հեռու Ս. Նախավկայի (Շամբ) վանքի առաջնորդին, Վանա լճի Կտուց կղզու Ս. Կարապետ վանքի վանահայր Գասպար վարդապետին, Ուչքիլիսայի Ս. Հովհաննես Մկրտչի վանքին, Երևանի բնակիչներին՝ օգնելու Սևանի անապատին և այլն³:

Ղուկաս Կարնեցին կոնդակ է տրամադրում նաև ասորիների հոգևոր առաջնորդ Մատթեոս կաթողիկոսին, որն իր խնդրանքի մեջ նշել էր, որ իրենց եկեղեցին հայտնվել է պարտքերի տակ՝ աղանդների դեմ պայքարի հետևանքով: Կաթողիկոսը 1787 թ. հոկտեմբերին շրջաբերական կոնդակով հայրությանը կոչ է անում բարյացակամորեն ընդունել Մատթեոսի ներկայացուցչին և օգնության ձեռք մեկնել հավատակից եկեղեցուն⁴:

Ժողովարարության կոնդակները յուրօրինակ սկզբնաղբյուրներ են, որոնցից տեղեկանում ենք ոչ միայն Հայաստանում ու հայկական համայնքներում գտնվող հոգևոր կառույցների վիճակի, այլև երկրում ու շրջակա պետություններում տիրող քաղաքական իրադրության վերաբերյալ:

Կյանքի վերջին տարիներին Կարնեցին կարողացավ ձեռք բերել ռուսական Պավել Առաջին կայսեր (1796-1801 թթ.) կողմից հատուկ հրովարտակ (1798 թ. փետրվարի 26-ի), որով կայսրը վերահաստատում է հայ կաթողիկոսի հոգևոր իշխանությունը Ռուսաստանի հայ ազգաբնակչության նկատմամբ⁵:

Սույն հրովարտակն ուներ ինչպես քաղաքական, այնպես էլ հոգևոր նշանակություն: Պավելի հրովարտակի պատճեններն ուղարկվում են ռազմական նահանգապետներ կոմս Ի. Գուղովիչին (Եգորևսկ), կոմս Վ. Կախովսկուն (Նովոռոսիյսկ), Ա. Բեկլեշևին (Կամենեց-Պոդոլսկ) ու Արշենևսկուն (Աստրախան) և հատուկ հրամանագրով կարգադրում կենսագործել այն: Դրանք ուղարկվում են նաև Կ. Պոլսում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Տոմարային և կարգադրում հնարավոր օգնություն ցույց տալ և պաշտպանել Ղուկաս կաթողիկոսի կողմից կայսրության մայրաքաղաքն ուղարկված հայ հոգևորականներին⁶:

Ղ. Կարնեցու կողմից նաև կարգ հաստատվեց, որ Էջմիածնի կողմից ձեռք բերված նվիրատվական կամ այլ գումարներն ամբողջությամբ և միանգամից վանքերի առաջնորդներին չտրամատրվեն՝ պատճառաբանելով, որ նրանց մահվան դեպքում հոգևոր առաջնորդական և այլ գործերը կիսատ են մնում⁷: Ուստի նա միջոցներն սկսեց բաժանել տարվա կտրվածքով: Ավելացած գումարը տարվա ավարտից հետո բաշխվում էր հաջորդ տարվա

¹ Դիվան..., հ. Բ, էջ 519-522, 524:

² Տե՛ս ՄՄ, ձեռ. ՅՊ 4538, թ. 190ա; Աղանեանց Գ., Նշվ. աշխ., Դ, էջ 417; Դիվան..., հ. Ա, էջ 321, 335-336, 425, 480:

³ Տե՛ս Դիվան..., հ. Ա, էջ 357, 376-377, 429; հ. Բ, էջ 492, 504, 598:

⁴ Տե՛ս նույն տեղում, հ. Բ, էջ 298-299:

⁵ Տե՛ս Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.), под ред. М. Нерсисяна, т. IV, Е., 1990, док. 319, с. 454; Հայոց պատմություն, հ. 3, Ե., 2010, էջ 166:

⁶ Տե՛ս Գրիգորյան Վ., Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Ե., 1958, էջ 197:

⁷ Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ 449:

վրա: Չի բացառվում, որ կաթողիկոսի այս որոշումն առաջ բերեր հոգևոր հայրերի դժգոհությունն ու անհանգստությունը: Սակայն այդ մասին որևիցե տեղեկության չենք հանդիպում:

Կաթողիկոսի հոգևոր գործունեության մաս կազմեց նրա պայթարը՝ Էջմիածին վերադարձնելու Հայ Առաքելական եկեղեցու կարևորագույն սրբություն հանդիսացող Սուրբ Գեղարդը: Վրաստանում տարածված ժանտախտը փարատելու համար վրացական արքունիքի կողմից խնդրանք էր հղվել՝ Գեղարդն ուղարկել այնտեղ: Մինչ այդ, 1798 թ. օգոստոսին, Թիֆլիսի մելիք Դարչին գրած Ղ. Կարնեցու նամակից տեղեկանում ենք, որ վրաց արքան ավելի վաղ էր խնդրել Գեղարդը, բայց կաթողիկոսը չէր ուղարկել՝ պատճառաբանելով, որ այն Մայր Տաճարում չէ: Փոխարենը, Կարնեցին Թիֆլիս էր ուղարկել Ս. Հակոբ հայրապետի աջը¹:

Խնդրանքը հավանաբար կրկնվում է, քանի որ Կարնեցին ի վերջո, ընդառաջելով վրացական Գեորգի արքային (1798-1801 թթ.), Հովհաննես վարդապետի միջոցով Վրաստան է ուղարկում Գեղարդը:

Սակայն վրացական կողմը չի շտապում այն վերադարձնել: Ենթադրելի է, որ կաթողիկոսը խղճի խայթ և մեղավորություն էր զգում՝ նմանօրինակ կարևոր ազգային արժեքը երկրից դուրս հանելու համար և գիտակցելով, որ Էջմիածնի սրբությունը կարող էր ընդմիշտ մնալ օտար երկրում, փորձում է բարեկամական հորդորների միջոցով այն վերադարձնել: Նա 1799 թ. օգոստոսին արքային գրում է, որ Գեղարդի շնորհիվ վրաց երկրում. «...փոխանակի փարատեցաւ ժանտամահն, և ովոք փափագ ուներ համբուրելոյ, համբուեաց, այս ութ ամիս եղև որ յայդր կայ..., ...խնդրեմք ի բարեպաշտե, զի զՍուրբ Գեղարդդ... դարձուցես առ Սուրբ Աթոռս»²: Կաթողիկոսը հավելում է, որ հարյուրավոր ուխտավորներ գալով Էջմիածին, ցանկություն էին հայտնում տեսնել հրաշագործ Գեղարդը:

Չկարողանալով վերադարձնել Գեղարդը, Կարնեցին «...այն համարեց մեծ կորուստ Էջմիածնի համար, տխրեց, իսկ 1799 թ. աշնանը ծանր հիվանդացավ»³:

Այսպիսով, Ղուկաս Կարնեցու հոգևոր գործունեությունն ուղղված էր՝ պահպանելու և ամրապնդելու Էջմիածնի վարչական կառույցը, կարգուկանոն հաստատելու և վերահսկելու Հայաստանի ու դրսի թեմերի հոգևոր կյանքի ընթացքը:

Асмик Амирджанян, ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ. В статье представлена духовно-административная деятельность Католикоса Всех армян Гукаса Карнеци. С первых дней восшествия на Патриарший престол Католикосу удалось наладить экономические отношения с армянскими епархиями Ирана, России и т.д. Его усилиями были урегулированы духовные дела в армянских епархиях.

В статье анализируется роль Католикоса по сплочению общины и сохранению духовной, национальной жизни армянского населения. Расширение экономики Эчмиадзина и других монастырей во многом способствовало активизации общей экономики и экономической деятельности местного армянского населения, таким образом ослабляя иностранный экономический гнет.

Переписка Католикоса с архиереями, Кондаки (официальное послание Католикоса) содержат богатый материал для изучения социально-экономической истории Восточной Армении, духовной жизни армянских епархий, монастырских хозяйств, экономической ситуации принадлежащих монастырям земель и поселений, вопросы налоговой системы и

¹ Տե՛ս ՄՄ ձեռն. Գ՛մ 4538, թ. 68բ:

² ՄՄ ձեռն. Գ՛մ 4538, թթ. 82ա-82բ:

³ *Смутные годы Эчмиадзинского патриаршества (1799-1809 г.), «Кавказская старина», 1873, Тифлиси, № 4-5, с. 95*

налоговых обязательств и т.д. Эти документы содержат свидетельства об усилиях Католикоса, направленных на стабилизацию экономического состояния Армянской Церкви, содействие его благосостоянию и защиту его материального благополучия от всяких посягательств.

Ключевые слова: церковь, духовно-административный, религиозный, Армянская епархия, Католикос Всех армян, Апостольский, епархиальный предводитель, государственный.

Hasmik Amirjanyan, ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI. The article presents the religious-administrative activities of the Catholicos of All Armenians Ghukas Karnetsi. From the very first days of his election as Catholicos, Ghukas managed to establish close economic relations with Armenian Dioceses in Iran, Russia etc. One of the main activities of Ghukas Karnetsi was the improvement of the religious-administrative regulations of Armenian monasteries and churches in Armenia and in Armenian dioceses too. The progress of the Monastery of Ejmiatsin and other monasteries promoted the development of the economic relations of local Armenians, consequently, weakening the economic bondage of foreign rulers.

Correspondence with diocesan leaders, various papers contain rich material on various spheres of the social-economic history of Eastern Armenia, of the spiritual life of Armenian dioceses, the issues concerning monastery economics, taxation and tax duties, the economic condition of the villages and places belonging to the monasteries, etc. These documents contain evidence of the efforts of the Catholicos to stabilize the economic state of the Armenian Church, to contribute to her welfare and to protect her material wellbeing from all encroachments.

Key words: church, religious-administrative, religious, Armenian Eparchy, Catholicos of All Armenians, Apostolic, political.